ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- փետրվարի 2021 թվականի №---Ա
քաղ. Երևան

«ՀՐԱԶԴԱՆԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ (ՀՐԱԶՋԷԿ)» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի օգոստոսի 19-ի «Հանրային կազմակերպությունների ցանկը հաստատելու, այդ կազմակերպությունների գնումների կարգերի նկատմամբ պահանջները, դրանց մոնիթորինգի և հաշվետվությունների ներկայացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №273Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) 5-րդ կետի համաձայն՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պարտավոր էր մինչև Որոշումն ուժի մեջ մտնելը, իր հաստատած գնումների կարգը համապատասխանեցնել Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջներին և Հանձնաժողով ներկայացնել համապատասխան տեղեկատվություն,

բ) 2021 թվականի հունվարի 14-ից Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ՝ Հանձնաժողովի Որոշման 5-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով, քանի որ Ընկերության կողմից նշված պահանջի կատարման վերաբերյալ Հանձնաժողովում տեղեկատվություն չի եղել,

գ) Ընկերությունը հարուցված վարչական վարույթի շրջանակում 2021 թվականի հունվարի 20-ի №10 և փետրվարի 2-ի №12 գրություններով հայտնել է, որ Ընկերության գնումների իրականացման կարգի մասին կանոնադրությունը համապատասխանեցվել

է Որոշման 2-րդ կետով սահմանված պահանջներին և հաստատվել է տնօրենների խորհրդի 2020 թվականի դեկտեմբերի 30-ի №18/20-ՀՆ որոշմամբ,

դ) Հարուցված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերության կողմից Որոշման 5-րդ կետը չի խախտվել,

և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Կարճել Ընկերության նկատմամբ Որոշման 5-րդ կետի հնարավոր խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2021 թվականի հունվարի 14-ին հարուցված վարչական վարույթը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- փետրվարի 2021 թ.